

ՊԱՅՄԱՆՔ

Յարկան գին է՝ Պոլսոյ հմր. 8 ՄԶԸ.
Գումարաց 10 ՄԶԸ.
Վերականգն. է՝ Պոլսոյ 4 ՄԶԸ.
Գումարաց 5 ՄԶԸ.
Մանուկան տուր մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱԴՆԵՐՈՒԹՅՈՒՆ 6 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Առջի օրը բաւական մտայնող զրոյց-
ներ եղան : Կըսուէր թէ Ռուսը Բ.
Դրան վերջնապէր մը տուած են,
գուցէ բերդերուն պարսպուիլը պա-
հանջելու համար : Թէ Ռուսաց զոր-
քը Կ. Պոլսոյ կողմն յառաջխաղացու-
թեան սկսած է : Թէ Եւրոպի ար-
ուարձանէն անդին Ալանիայի կողմե-
քը Ռուսաց զօրք տեսնուած և Օս-
մանեան յառաջապահներն ալ իմաց
առած են թէ հինգ հազարի չափ
Ռուսը յիշեալ գրից վրայ գեաղուել
կուզեն : Թէ Օսմանեան հրամանա-
տարք պէտք եղած հրահանգներն
ընդունած են, և այլն : Այս զրոյցնե-
րուն ստուգութեան ատորձանը չէր
գիտցուիր : Բայց հարկաւ առանց
կրակի ծուխ չըլլար, և ներկայ վի-
ճակին նկատմամբ Բ. Դրան և Ռու-
սաց մէջ անդադար բանակցութիւնը
կըլլան : Արդէն ծանուցած էինք թէ
Բերդապուրկի մէջ կայսեր նախագա-
հութեան ներքեւ անցեալները դու-
մարեալ մեծ ժողով մ'որոշած էր՝
բերդերուն պարսպուիլը փութայնե-
լու համար պահանջներ ընել, նը-
կատելով որ Օսմանեան զօրքը կը բազ-
մանայ և կ'ամրանայ, Անդղիա կը պատ-
րաստուի, իսկ Ռուսաց զինուորական
գերքն օրէ օր կը տկարանայ և 'ի զուր
ժամանակ կը կորուսանէ : Գուցէ նոր
գետնային լուսանօք իշխանին ընդու-
նած հրահանգներն ևս այնպէս ըլ-
լան, և այս պատճառաւ Ռուսաց ա-
ւելի ստիպմամբ իրենց պահանջումը
վերանորոգելը դարմանալի չէ :

Կը մնայ տեսնել թէ կայսերական
կառավարութիւնն ի՞նչ որոշում պի-
տի տայ : Հարկաւ իւր գաշխաղութե-
ան մը կնքած պարտականութիւն-
ները կը ճանչէ : Անցը—Ռուսական
վէճին մէջ ալ բոլորովին չեղած է :
բայց բերդերը պարսպելու համար նիւ-
թական գծուարութիւնը կան, զորս
հարկելի չէ անտես ընել : այնչափ զէնք
աւազմամբեր և զօրք քանի մ'աւելոր
մէջ պարսպել անկարելի է : Ասկէ գատ
ժողովրդական ընդդիմութիւնն իսկ
ուշադրութեան արժանի կէտ մ'է :
Եթէ Ռուսո-Պոլսոյարական վարչու-
թիւնն իսլամոյց դէմ բռնութիւններ
և հալածութիւններ չընէր, եթէ անոնց
կեանքն, ինչքն ու պատիւը պաշտ-
պանէր, եթէ Պոլսոյները զսպէր և
պատժէր, գուցէ այն ատեն պար-
սպուիլը բերդօրէից և գաւառաց
իսլամ բնակիչները նուազ ընդդիմու-
թիւն ընէին Ռուսական վարչութեան
ներքեւ մտնելու : Բայց այժմ իրենց
աչքին առջեւ ունենալով Պոլսոյարի
ուրիշ կողմերն անցած անցքերն, ի՞նչ
պէս կրնան փոտահութիւն դրալ և

Ռուսո-Պոլսոյարական լուծն ընդունիլ
Ֆիլիպէի Յոյներն իսկ մեծ տէրու-
թեանց բողոքեցին Սլավոյց 'ի գործ
դրած զեղծմանց դէմ, իսլամք ի՞նչ
պէս կրնան սպասել որ իրենք անոնց
ձեռքն աւելի մեղմբալդ մ'ունենան :
Պաթուկի Լազերն ալ նմանապէս կը
յուզին : Եւրոպական լրագիրք կը ծա-
նուցանեն թէ Ռուսը Լիվանա մտնե-
լու ժամանակ բնակչաց դէմ մեծ խըս-
տութեամբ վարուէր են, ջարդ և ա-
ւարառութիւն տեղի ունեցեր է :
Ի՞նչպէս կարելի է ուրեմն Շուսուի,
Վարնայի և Պաթուկի բնակիչներն այն
վիճակին ենթակայ ընել, մանաւանդ
որ բնակչաց մեծ մասէն Յոյներն իսկ
չեն ընդունիր այնպիսի լուծ մը, և ի-
րենց բոլոր զօրութեամբ կը բողոքեն :
Անխոհեմութիւն չըլլա՞ր ամբողջ ժո-
ղովուրդ մը թողուլ որ յուսահատու-
թեան մէջ ինքնալով Ռուսօրի բնակչաց
նման ապստամբութեան դիմելու
հարկադրի, և այնչափ անմեղ կեանք
քեր դո՞ւ երթան :

Հայաստանի կողմն ալ ուրիշ տեսա-
րան մը կը ներկայանայ : Հոն տղէտ
և վայրենի ֆիւրաբեր ժողովուրդը հա-
րաւորապէս կ'ուստի Ռուսը և ի-
րենց գործակատարներն ալ քրիստոն-
եայ ժողովուրդը գաղթելու կը յոր-
դորեն եղեր : Անցեալ օր ծանուցինք
թէ Ս. Պատրիարքը Բ. Դրան հաւա-
նութեամբ երեք վարդապետ զըր-
կեր է 'ի Հայաստան, որպէս զի ժո-
ղովուրդը գաղթականութեան չդի-
մելու համոզեն : Բազմալի և հաւա-
տալի է մեզ որ անոնց պաշտօնն յա-
ջորութեամբ պտակի, քանզի Հայաս-
տանի քրիստոնեայ բնակչաց համար
ասկէ փութալար և արեւտալի բան մը
չենք կրնար երեւակոյիլ : Գաղթական
նութիւնը միշտ իւր թշուառութիւն
ներն ունի : Բայց ասկէ, որչափ որ ի-
րենց կրտսեր ներքինութիւնները ծանր ըլ-
լան, անցաւոր և առ ժամանակեայ
են, և տարակոյց չկայ որ գաղթակա-
նութեան նման հայրենիքը թողուլ
անստույգ աղագայի մը մասնաւորե-
լով ծանր չեն կրնար ըլլալ : Քաղա-
քակրթութեան աղգեցութիւնն հար-
կաւ 'ի մօտոյ փոքր Ասիոյ և Հայաս-
տանի մէջ իւր ոյժն զգալ պիտի տայ :
Վստահ եմք որ երբ կայսերական կա-
ռավարութիւնը ներկայ հոգերէն ա-
զատի, Ասիոյ գաւառաց մէջ լուրջ և
հաստատուն բարենորոգումներ 'ի
գործ պիտի դնէ, քանզի այսուհե-
տե անոնք են իւր գլխաւոր եկամտից
աղբիւրն, այն ատեն ժողովուրդն իւր
կրտսեր տառապանքը կը մոռնայ : Երբ
այսպիսի մեծաւոր աղագայ մը կը
տեսնուի, հայրենիքը թողուլ և գաղ-
թականութեան դիմելն անխեղութե-
ան չէ : Ինչպէս միմեզնի հիմա եղած
գաղթականութիւնները քիչ փութա-
տուած են Հայոց աղբիւն, որ աշխար-

հիւ ամեն կողմը ցրուելով՝ իւր ա-
պագայն փտանգած է : Բայց կրնայ
ըսուիլ թէ Ռուսական զօրաց քաջաւո-
տեղերը ֆիւրտերը կուգան և անդը-
թութիւններ կընեն : Ասոնք արգի-
լելու համար կարելի է մերձակայ Օս-
մանեան զօրաց դիմել և անոնց պաշա-
պանութիւնը խնդրել՝ փոխանակ Ռու-
սաց հետ գաղթելու, կամ մերձակայ
քաղաքներն ապաստանիլ, ուր ֆիւր-
տերը չեն կրնար համարձակապէս ի-
րենց աւաղակութիւնն 'ի գործ ընել :
Բ. Դուռն արդէն ճարը Շուսուի ան-
դամներէն դնդապետ Ալի Շէֆիկ պէ-
յը զրկած է Տէրսիմի ֆիւրտերը զըս-
պելու համար : Վերջապէս Հայկական
բուն շահը կը պահանջէ՝ առանց մեր
հայրենիքը թողուլ՝ վիճակին բարեւո-
րման աշխատիլ : Գաղթականութիւնն
յուսահատ միջոց մ'է, որոյ դուռներն
ամեն ժամանակ բաց են, բայց քաջու-
թիւնն առանց յուսահատ միջոցներու
վիճակը բարեւոքելու մէջ է : Միթէ կը
կարծուի որ Ռուսիա դրա՞խտ մ'է :
այս մասին պէտք չէ անձնախաբու-
թիւն ընել : “ Ինչպէս անցեալները
քանի մը կարեւոր նշաններէ տեսնը-
ւեցաւ, կրտսէ Տէպալ լրագիրը, Ռու-
սիոյ բարոյական վիճակը խիստ գեշ
է, և նիւթական վիճակն ալ անկէ լաւ
չէ : Երմուական դժուարութիւններն
ամեն օր աւելի կը ծանրանան : Վեր-
ջապէս վերջին հնձոց անբաւականու-
թեան և փոխադրութեան միջոց-
ներու նուազութեան սարսափելի սով
մը գոյանալով՝ Ռուսիոյ հիւսիսային
արեւելեան գաւառաց մէջ կը տիրէ :
Այս մասին առնուած տեղեկութիւն-
ներն ուրիշ տարւոյ մը պատահա-
տեղ կը յիշեցնեն : Եթէ անոնց վրայ
աւելցուի բանակին տեղափոխման վի-
ճակը, քանի մը դիւրքերու վատ ընտ-
րութիւնը, վերջապէս Ալթէֆանոսի
գաշխաղութեան 'ի վեր բոլոր Եւ-
րոպիոյ յուրա ընթացքը, կրնայ հաս-
կըցուիլ թէ Ռուսիա կուզէ զինուոր-
ները : Բայց ի՞նչ են այս զինուորները :
Նոր բանակցութիւնը խորին գաղտ-
նեաց մէջ ծածկուած են, և անկա-
րելի է առ այժմ առանց լաւատեսու-
թեան կամ չարատեսութեան կարծիք
յայտնել : ”

Ռուսիոյ կայսրն՝ ապրիլ 16/28ին
որ Զատիկի օրն է, իւր մօրեղբայր
Վիկտոր կայսեր նամակ մը գրած էր,
որ մեծ աղաւորութիւն ըրած կերե-
ւի անոր վրայ : Բէյֆալի առջեւ Ռու-
սաց բանակին գաղաւթած ժամանա-
կին պէս՝ Վիկտոր կայսրն ըսեր է թէ
արդեօք կարելի չէ՞ իւր քաղաքէն
Ալեքսանդր կայսեր՝ օգնութիւն մ'ը-
նել, և իւր խորհրդականաց հարցու-
ցեր է թէ՞ կարելի՞ էր արդեօք Գեր-
մանական խորհրդարանին պատերազ-
մական ծախք մ'առաջարկել : Իսկ
խորհրդականք ծանուցեր են թէ խոր-

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ած արքը խորհրդութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորհրդ-
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-
թիւն Ստանբուլէր Խառնէսի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :

Հանրաւ ծախքը չվճարուած նա-
մակ չընթերցուիր :

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ — Եօրք 15 մայիս.

Ռուսիա 200000 հրացան գնեց Ամե-
րիկայէն, 300000 հատ ալ ապսպրեց :

Լոնտոն 16 մայիս.

Թայմը լրագիրը ինքնապարկէն հե-
ռագիր մը կը հրատարակէ ծանուցանող
թէ խաղաղական արամադրութիւնը ա-
ւելի գորտաւ են :

Բէյքիւ 16 մայիս.

Երեւոյթանաց ժողովը 60 միլիոն ֆի-
օրին վարկին իրացուցման տաճարին ըն-
դունեց :

Հոտմ 16 մայիս.

Պատերազմական գործոց նախարարն
առաջարկութիւն մը ներկայացուց երեւոյթ-
խանաց ժողովին, որպէս զի կառավարու-
թեան իշխանութիւն տայ պետութեան
վերաբերեալ կարուածներ վաճառելով 10
միլիոն ֆրանք հայթայթելու : Այս ցու-
մարն հեծելազօրաց, ամբարձրեանց և հա-
ւական ու բերդական նիւթոյ համար
հարկ եղած ծախուց վրայն պիտի գոր-
ծածուի :

Լոնտոն 16 մայիս.

Տարագողորմ գաւառաց մէջ ծագած
խռովութեանց ասիւն, ուր գործաւորք
աշխատութիւնը դադարեցուցին, ներքին
գործոց նախարարն յայտնեց երեւոյթա-
նաց ժողովին թէ ամեն զգուշութեան մի-
ջոցներ ձեռք առնուած են :

Փարիզ 16 մայիս.

Բեղրադուրկէն եկած լուրերը Ռուսիոյ
հաշտութեան արամադրութիւններն հաս-
տատուելու երևոյթ ունին :

Լոնտոն 16 մայիս.

Ռուսիայէն առնուած տեղեկութիւնք

Թուրքիոյ մէջ յայտնուած անհասարակ փոփոխութիւնները, որոնք երկար կը լսան թուէին, այլ միայն հարեանցի յիշեց թաւաքին Արեւմտեան կողմը գտնուող այն հին աւերակը՝ որուն համար կըսուէր թէ Սիմոն-Թադարեանի տունն է, ուր Պետրոս խնամեցաւ Տաքիթա-Այծեմիկ հաւատուին առողջացնելու համար:

Այդ աւերակն չէնքը՝ որուն մէջ կողմը մը մզկիթ, վարոս եւ շինուած են, Տաքիթա կը վերաբերին:

Մնացեալ մասը՝ մեր ազգին սեպհա-կանութիւնն է:

Հոս բերք մը կայ, որ խաշակրաց ժաւանակէն մնացած է, ուր կը կարծուի թէ՛ Քաղաքի թաղապետի մը բնակարանն էր: Ասոր կից՝ Հայոց հին գերեզմանատունը կայ, և ահա՛ անոր Արեւմտեան կողմը կը կոչուի՝ հանգուցեալ Սեդրոս սմիրայի նուիրած մեր մարգարան (գաւանթիւն) ըստած չէնքը:

Այս կիսամիւլ հաստատութիւնը՝ Հայոց վանքին անձախիւր սեպհականութիւնն է:

1834 ին, երբ Եգիպտոսի խորհրդի փառայն կը տրեւէր հոս, հիւանդութեան պատճառաւ՝ Յոսիպէ եկող ճանապարհորդներն ու ուխտաւորները վերելու (Պէրու) կը հանուէին, առողջապահիկ վրէժնէն ազազաւ:

Ռեւոլուցիոնը հոն շատ կընդունէին: Հայոց և Յունաց վանքերը՝ իրենց ուխտաւորներուն դիւրութեան համար, Յոսիպէ՝ իրենց կալուածներուն մէջ մաքրարան շինելու հրաման կը խնդրէն և կատարեն:

Ժամանակ մը՝ իրենց նպատակին ծառայեցնելէ ետքը, երբ հիւանդութիւնը չը դադրէր, տէրութիւնը առժամայ կերպով զօրաց կը յատկացնէ այս տեղերը:

Սոյն պատճառաւ երկար տունն տէրութեան տրամադրութեան տակ կը մընան:

Մերթ ընդ մերթ կը սահանջուին տէրութիւնէն: Վերադարձնելու դժկամա-կութիւն ցոյց կը տրուի, ինչ ինչ անհեթեթ անարկութիւններ յարուցուելով:

Բայց վերջապէս, քանիցս եղած պաշտօնական քննութիւններով կը հաստատուի Հայոց և Յունաց իրաւունքները, և Տաքիթա 1287 թուոյն տէրութիւնը, Սուրիայի կուսակալին միջոցաւ յատուկ հրաւերագրով մը կը վերադարձնէ:

Այնուհետեւ վանքերը իրենց սեպհա-կանութեան տէր կը լսան, և կսկսին գործածել:

Բայց մօտ օրերս, շիտուէր ինչ պատճառաւ, մաքրատան բժշկին տուած սուրիական տեղեկութեան մը վրայ՝ կառավարութիւնը բռնի կը դրուէ:

Այս ծանրակշիւ իրողութեան նկատմամբ ազդեալ բողոքներ կը լսան տեղական իշխանութեան, Պոլսոյ Առաջին-Նախարարին, և Կեդր. Ազգ. վարչութեան:

Այժմ քննութիւնն սկսուած է և կը շարունակուի:

Անշուշտ բարեխնամ տէրութիւնը՝ ազգաց կալուածական անբաժանարարութեան սկզբունքը յարկ ելով, պիտի յարգէ նաև Հայոց իրաւունքը, որ կայսերական հրովարտակներով, վաւերական թղթերով, պաշտօնական հաստատագրերով և տեղեկագրերով նուիրագործուած են:

Դառնանք մեր տեղապահական շարունակութեան:

Յուսկէ՝ Յովնան մարգարէին առաջին ապաստարանն եղաւ:

Խաշակրաց ժամանակ՝ համբաւաւոր չէն քաղաք մ'էր սա՛:

Տեղական խաշակիւր իշխողներէն ոմանք՝ Կիլիկիոյ Ռուբինեանց թաղաւորաց ազգիկներուն հետ ամուսնացած էին:

Եւրոպայի տեղապահին է ճափա:

Մեր ժամանակի իշխող պատմիչներէն շատերը՝ Եւֆրատ քաղաքը ազատութիւն չունէին: Դա՛ թէ՛ կամ թէ՛ ի կիր արկած են:

Խաշակիւրներէն յետոյ՝ Սարակիսոսեանց Սալահիտինին և անոր յաջորդաց անցած ժամանակ՝ մեծ աւերակներ պատահէր:

Եւֆրատ ընդ երկար արշաւանաց և աւարառութիւններու թատր դարձաւ:

Ժամանակակից ծերունի մը կը պատմէ թէ, նախնիք՝ փախչելու դիւրութեան համար տան կարասիք չէին հոգար: Մի-

այն բարձ մ'է անկողին մ'ունէին:

Քաղաքին համակործան աւերակաց նկատմամբ՝ Տաքիթա արժանահաւատ պատմիչ մը, Եփեսոս-Համալիւր, իւր ճանապարհորդագրութեանը մէջ պատգէս կը յիշէ. « Եւֆրատ քաղաք, Հայոց վանքը իմաց: Ռուբինեան ուրիշ բնակութեան տեղ չկար, միայն Հայոց վանքը և բերք մը... »

Յուսկէ մէջ՝ Հայոց, Յունաց, Լատինաց և Հռոմէական Յունաց վանքեր կան:

Մովսիսի ճանապարհորդաց պաշտպան՝ Ս. Նիկողոսոս հայրապետին անուամբ անթուական մատուցած մ'ունիքը վանքին մէջ, հանդերձ սիրուն դանդախաւորութիւններով, Երեւանցի գաւթին մէջ է՝ Երեւանցի Երեւանցի մայր Պետրոս Պատրիարքի գերեզմանը:

Յորանկաց պատերազմին ժամանակ՝ Օսմանցոց Նպարքոսը երբ Յոսիպէ կուգայ, հանգուցեալ պատրիարքը Նիւսապէսէն հարկ կը լսայ այցելութեան դալ, ուր կը վախճանի ի թուին Հայոց Ռ. Մովսիս: Մատրան արեւմտեան կողմը՝ հոգեւտուն ըստած ամենահին ընդարձակ չէնքը կայ, ուր երբեմն ժամանակաւ բնակուցներու համար գիշերօրական հիւանդանոց եղեր է 1799 ին Մեծն Նախիւն Ս. ժամանակ:

Պոնափարք՝ ստէպ այցելութեան կուգայ եղեր այս տեղ՝ ի տես հիւանդաց: Հիմայ ալ Եւրոպացի հետաքրքիր ճանապարհորդք ուխտի կուգան:

Սոյն ընդարձակ սրահը՝ այժմ ուխտաւորաց սենեակներու վերածուած է: Արդէն վանքը՝ ուխտաւորաց հիւրընկալութեան համար 30 հատ կամարակալ սենեակներ ունի:

70 կառքի չափ կալուածներ կան տուն, պանդոկ, կրպակ, ճաշարան, ուրոնք տարեկան 800 լիւրայի մօտ եկամուտ բերեն:

1867 ին Եգիպտոս կաթողիկոսը վանոց գետնայարկի քարէ կամարակալ սրահները շինել կուտայ, որ առաջուց փայտակերտ է եղեր:

Մատուռը՝ Շղթայակիր-Գրիգոր հայրապետ կը վերանորոգէ: Վանքին կալուածներուն մեծ մասը՝ Շղթայակիր ի Պոլսու եղած ատեն կը գնէ:

Տեսուչ Ղազար վարդապետ մը վանոց վերանախարհները շինել կուտայ: Նարնջենի անտառոց մեծ մշակութիւն, մեծ խնամք կուտայ:

1840 ին՝ Գարիբէլ պատրիարքի ժամանակ՝ Տիգրանակերտցի տեսուչ Մեսրոպ վարդապետի ձեռքը և աշխատութեամբ Տեսչարանն ու Պատրիարքարանը կը նորոգուին:

Նոյնպէս Նիկողոսոսի տեսուչ Գրիգորի վարդապետը՝ Վանքին մէջ քանի մը սենեակներ աւելցնելով, այսօր դատի տակ գտնուող մաքրատունը շինել կուտայ, որուն գետինը՝ ինչպէս վերն ընկեր, հանգուցեալ Սեդրոս սմիրայի յիշատակն է, ինչպէս նաև Հայոց վանքին խանր, ճաշարան, բնակարան, բնակարաններ, և հին գերեզմանատունը:

Հանգուցելոյն ձերբանոցութեան ինքնաբարձաւ վիսյներն են ասոնք:

Պատմութեան առջև գրկանք ըրած չըլլալու համար, աստանօր կարճանագրենք, երբեմն փոխ-հիւսպատոս Բրուսիոյ, Ամերիկայի և Թոնքանայի տէրութեանց հանգուցեալ Չմիւռնացի Յարութիւնեան Մուրատ աղային ըրած նուէրները՝ քաղաքէն դուրս արդի նոր գերեզմանատունը, ընդարձակ պարտէզ մը, քաղաքին մէջ տուն մը, Բեթլէհէմի մէջ ուրիշ տուն մ'ալ:

Յուսկէ Հայոց գաղթականութեան թուականն ալ յայտնուած չէ:

Վանքին թարգմանութեան պաշտօնը վարողները՝ իրենց նախահաւ Պ. Գրիգոր Սէմեանէն յաջորդաբար կ'ընան, որ Պարսկաստանէն գաղթական մ'է եղեր:

Հայք ընդամենը քան տուն կը կազմեն:

Աւստրիոյ և Հունգարիոյ փոխ-հիւսպատոսը՝ Պ. Յակոբ-Բաքալ անուն եւսանդուն աղապատ Հայ մ'է, որուն փոխանորդութիւնը կը ներկայացնէ Պ. Յակոբ Գեորգեան հայրենանուէր հայկազուներ:

Գերմանիոյ փոխ-հիւսպատոսը՝ Պ. Սիմէոն-Սրապիոն Մուրատեան անուն պատմագէտ անձն է: Կառավարութեան առջեւ ձեռք Յովնայի-Սրեմաթագի մ'է... Ս. Յ. Ա. Չմուռն:

Սախմիս 6 մայիս 1878

... Խմբակիր:

Նոր Դար ազատական լրագրող խմբագրատեղա հանգուցեալ Գ. Խոստարեանի ընտանեաց և չորս անչափահաս արեւրոս համար, մեր միջոցաւ բայցաւ ճանդանակութեան այս առաջին ցուցակին հրատարակութիւնը կը խնդրեմք ձեր Մեծապատուութեան:

Շնորհակալութիւն յայտնելով բարեկէր նուիրատուաց, որոնք աղքատին ազատական լրագրողութիւնը մը յիշատակին ի պատիւ՝ նորա գաւառիկները անմխիթար չեթաղու համար սոյն ձեռնարկութեան անունակից եղան:

Միւսմը...

Ք. Չմեռն Պեթրոս Բարեկէցեան

ՅԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՅ	ՂԸ
Ամեն. Ս. Պատրիարք Հայր	500
Պետրոս էֆ. Գարակէօզեան	500
Իւզարեան Եղարք	280
Տիգրան Խ. Եղեկիէեան	280
Պոլսո Մերութեան	280
Բերդիւթ Զիւճեան	200
Միհրան Սէթեան	200
Միքայիլ Ալեքեան	200
Յովհաննէս Կրճիկեան	200
Յակոբ Ն. Նիքոթեան	200
Ռուբին Գրիգորեան	200
Ստեփան Չարքեան	200
Գ. Երեւանցի	100
Յակոբ Արշակ	100
Յակոբ Համանեան	100
Յակոբ Սէլմանեան	100
Մ. Կարապետ Եգնեան Եղարք	100
Նազարէթ Շահպաղ	100
Սերովբէ Յ. Բալթաեան	100
Ոմն	100
Ալեքսան Ալեքեան	50
Խ. Արեւան	50
Յովհաննէս Արշակունի	50
Կ. Ե.	50
Ոմն	40
Կաթիլէլ նպարավաճառ	20
Ոմն	20
Ոմն	20

Թղթագրում 100 զրէն 4340

Ստամբուլի թագ. խորհուրդին ալ հետեւեալ հանգանակութեան ցանկը զրկած է մեզ:

Հարկերնոց թուղթ	
Գաղապար էֆ. Յորանկերեան	2
Միքայիլ Արաքսեան Կոնստանտնուպոլիս	2
Ենոփ Փուճեան	4
Ազարիկ և Գրիգոր Եղբ. Միքայիլեան	2
Յովսէփ Զիւճեան	1
Սեպուհ Փառեան	1
Օսկան Լորէնեան	1
Կարապետ Զիւճեան	1
Պետրոս Գալիանեան	2
Յարութիւն Թիւրեան	1
	17

Կէյլէի միջադիւղէն Մեծ. Աղա-րիկ աղա Կարապետեան երկու քրտաննոց թղթագրում զրկած է մեզ ի նպատակ հանգուցեալ Օգոստէն էֆէն. տիւր ընտանեաց:

Կ. Պոլսոյ Արարատեան ընկերութեան կողմէ վանայ Ալիւր Գիւրի վարժարանին դասատու Կարգեցաւ նախ Գիւրիայի Մարտիրոս էֆէնտի Շիտանեան, որ Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ ծառայում առած, և վերջին ժամանակներս ալ Գաղապարի Արամեան երկուսեւ վարժարանին մէջ օգնական դասատուի պաշտօն վարած է:

ՀԱՍՐԱՆ
ԸՆԹԵՐՅԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ի Թարգմէ Բարեկէ Եղեւն-Եղեւն Եղեւն-Եղեւն
Գ. ԵՐԵՎԱՆ
1878 ապրիլ 8 Է. Գիւրի Ի Ժամ 2
ՄԱՍՆ Ա.
Նուագ. — Օր. Նարդոս
Ռոնտո Գարբիլիոս. — Ֆ. Մէնարկոս
— Պատմօրոյ

Բանաստեղծութիւն — Ա. Մ. Գարապէտեան էֆ. Գիւրիէն կամ Գիւրիական հետազոտութիւն. — Հայոց պատմութեան պատմական աղբիւրները Գիւրիական հետազոտութեան տակ ձգելու հարկն է. — Պատմութեան վրայ ընդհանրապէս. — Թէ ինչ տեղի ունի պատմութիւնը մարդկային ազգին Գիւրիական ծանօթութեանց կարգը. — Թէ ինչ Գիւրիականներ իրենց վրայ կը նպաստեն պատմութեան. — Պատմական վիպութեան արդիւնքն և նորա աղբիւրութիւնն. — Մեր պատմութեան հոգ տանի մեր պարտն է. — Գիւրիական (Երեւանցի) կանոններուն վրայ:

ՄԱՍՆ Բ.
Նուագ — Գալիկի և Չուրիկի ձայնակ. ցուրտեմ. — Օր. Նարդոս
Բէսկոյէ. — Գալիկի — Պառլա և Պ. Պէլլի
Բանաստեղծութիւն — (նոյն)
(Շարունակութիւն)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ՎԻՄԱՏԻՊ ՊԱՏԿԵՐ

ՄԻՔԱՅԻԼ ՆԱԼԵՆԴԻԱՆՅԻ
Սոյն նշանաւոր հայրենասիրին մեծագիւր պատկերը, խիստ վայելուչ և մաքուր գծուած կը ծախուի Ֆրանկեան գրատունը և ամեն Հայ գրավաճառաց քով, Գիւրիական գիւղէն Սրեմաթագի մ'է ալ նոյն ընդունեալութիւնը պիտի գտնէ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂ. ՎԵՐԵՆ ԼԵՂՈՒԻ

ԵՐԵՎԱՆԻԱՆ ԳՈՐԾՆԱՅ ՀԱՄԱՐ
Հեղինակ
Լեւոն Լեւոն
Աշխատասիրեաց Ա. Պիպեւեան
Հեղինակն հրատարակող

Սոյն գործնական քերականութիւնը Գաղապար երկրորդական վարժարանաց նախապատրաստական կարգը ընդունուած ամենէն ընտիր և յարմարագոյն դասագիրքն ըլլալով, տարակոյս չկայ որ ազգային վարժարանաց մէջ ալ նոյն ընդունեալութիւնը պիտի գտնէ:

Կը գտնուի Կ. Պոլսոյ Գ. Գալաֆեան և այլ գրավաճառաց քով, և Բերդար Մօսիւ վերսի գրանցոյց Գին 12 զր:

ՆՈՐ ԴԱՍԱԳՐԻԲԵՐ
ԸՆԹԵՐՅԱՆՈՒՅ

Ա. ՄԱՍՍ
Հրատարակեց Գ. Մեքեան
Ի Զմիւռնիա
Դպրոցներու մէջ գործածուելու համար ընտանի լեզուով գրուած, զբարձր և միանգամայն հրահանգիչ դասագիրք մ'է:

Կը գտնուի Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով Գին 33 սանթիմ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆ
ԸՆԹԵՐՅԱՆՈՒՅ

ՀԱՐՅ ԵՒ ՄԱՐՅ ՀԱՄԱՐ
Գրեց Ս. Տէր Սեփեան
Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի: Գին մէկ հինգանոց թղթագրում:

